



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՆԱԳՐՈՒՄԻ ՄԱՐԶ
ԽԱՉԱՂՔՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.խաչաղքյուր

14.07.2020թ.

N_106_

ՀՀ ՊԵՆԱԳՐՈՒՄԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Պեղարքունիքի մարզի խաչաղքյուր համայնքապետարանի 20.03.2020թ-ի ավագանու երրորդ նիստի թիվ 10,11,12 որոշումները:

Առդիր 5 էջ:

Համայնքի ղեկավար՝

Ս. Գալստյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

,__20__ __03__ 2020թ.

հասցե 1փց. N 30

հեռ.094-94-87-40

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 3-ՐԴ ՆԻՍՏԻ N 10, 11,12, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր շեռ. 094948740

20.03.2020թ.

ՆԻՍՏ N 3

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարանի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 3 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր երեք հարցից:

1. Խաչաղբյուր համայնքի վթարված խմելու ջրագծի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին:

Ձեկուցող՝ Ս. Գալստյան:

2. Համայնքի ճակատային կոչվող տարածքին հանդապահ նշանակելու մասին.:

Ձեկուցող՝ Ս. Գալստյան:

3. Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի զբաղվածության, նորածին երեխաներին ֆինասական օժանդակություն ցուցաբերելու մասին:

Ձեկուցող՝ Ս. Գալստյան

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ 3
Ձեռնպահ:

ԴԵՍ

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար՝

Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 10

ԽԱՉԱԳԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԹԱՐՎԱԾ ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը Խաչաղբյուրի համայնքի բնակչությանը սպասարկող վթարված խմելու ջրագծի մոտ 50 մետր հատվածի խողովակաշարը նորով փոխելու և վերականգնման աշխատանքները իրականացնելու համար գումար տրամադրելու առաջարկության մասին:

Քանի որ կան բնակչության կողմից բողոքներ կապված նշված ջրագծի հատվածը նորով փոխելու առաջարկները

Քննարկաման արդյունքում ավագանին

Որոշեց՝

Տալ համաձայնություն համայնքի բյուջեից 400000(չորս հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել վթարված ջրագծի համար խողովակաշար ձեռք բերելու և վերանորոգման աշխատանքները կազմակերպելու համար:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ 3

ԴԵՄ 0

Ձեռնպահ 0

1. Տիրայր Գաբոյան
2. Գագիկ Խաչատրյան
3. Պետրոս Զաքարյան

Համայնքի ղեկավար՝



Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 11

Լսեցին-1. Համայնքին «Ճալլա» Կոչվող տարածքին հանդապահ նշանակելու մասին:

Ձեկուցող՝ Ս. Գալստյան:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ Խաչաղբյուր համայնքապետարանի խոտհարքներն ու հացահատիկի ցանքատարածությունները գտնվում են հարևան համայնքներին հարող սահմանային մասերում, որոնք մշտապես արածեցվում են տվյալ համայնքների անասունների կողմից: Խնդիրը բարդանում է համայնքի անբարեխիղճ անասնապահների պատճառով, որոնք առավել ուշադիր չեն հանրային դաշտերի ու ցանքատարածությունների պահպանությանը ու անասուններին մեծամասամբ դաշտ են թողնում առանց հսկողության:

Ձեկուցողը առաջարկեց մինչև հունձը նշանակել հանդապահ:

Ներկայացված հարցի վերաբերյալ իր կարծիքը հայտնեց նաև գ/պ աշխատակազմի քարտուղար Ն. Ջաքարյանը՝ հավելելով, որ հանդապահ նշանակելու խնդրանքով համայնքապետարան են դիմում նաև համայնքի շատ բնակիչներ:

Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Համաձայնություն տալ մինչև բերքահավաքի ավարտը Խաչաղբյուրի Ճալլա կոչվող տարածքին հանդապահ նշանակել Եղիազարյան Հայկազին՝ աշխատավարձը սահմանել 80000 (ութանասուն հազար) ՀՀ դրամ : Վճարումը կատարել ապրիլի 1-ից:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ 3
Ձեռնպահ:

ԴԵՄ

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Ջաքարյան

Համայնքի ղեկավար՝



Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱԶԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 12

Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի զբաղվածության, նորածին

երեխաներին ֆինասական օժանդակություն ցուցաբերելու մասին:

Ջեկուցողը ներկայացրեծ, որ բնակչության շրջանում համապատասխան ուսումնասիրություններից պարզվում է, որ արտագաղթի հիմնական պատճառը գործազրկությունն ու զբաղվածության պակասն է, որը իր հերթին բերում է սոցիալ-տնտեսական վիճակի վաթարացման: Այն առավել ընդգծված է երիտասարդության շրջանում, որոնք աշխատանք են փնտրում հանրապետությունից դուրս: Փաստերը ցույց են տալիս, որ արտագնա աշխատանքի մեկնողներից ոմանք նախընտրում են չվերադառնալ, որը տարեց-տարի աճի միտում ունի: Առկա փաստերը բերում են ամուսնությունների նվազման:

Ջեկուցողը առաջարկեց հնարավորության սահմաններում ամեն ինչ անել բնակչության՝ հատկապես երիտասարդության շրջանում, զբաղվածության տոկոսը բարձրացնելու համար:

Համայնքի ղեկավարը առաջարկեց համայնքի բնակիչ հանդիսացող ամեն առաջին երկրորդ նորածինների համար համայնքի բյուջեից հատկացնել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, հաջորդ ծնված 3-րդ երեխայի դեպքում գումարը կրկնապատկել:

Հարցի կարևորությունը լսելուց հետո ավագանին

Որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի վերը նշած առաջարկին :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ 3
Ձեռնպահ:

ԴԵՄ

1. Տ. Գաբոյան
2. Գ. Խաչատրյան
3. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար՝  Ս. Գալստյան

